սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ, որպէս պատմէ զայս ամենայն ընդարձակ նա ինքն Հաննա վարդապետ ականատես և գործակից Շղթայակրի։

Իսկ Տէր Կարապետ Կաթուղիկոսն և Հաննա վարդապետ, որ 'ի սոյն ժամանակի էին 'ի Կոստանդինուպոլիս, և Յովհաննէս Պատրիարքն, գրեցին գիր թախանձանաց հանդերձ ամենայն ժողովրդովք առ Գրիգոր Պատրիարք Երուսաղէմի, հանել 'ի պարանոցէ իւրմէ զՇղթայն, զոր կրէր յութն ամաց հետէ. և նորա զիջեալ 'ի խնդիրս նոցա եհան զայն, և չինեաց սեղան փոքրիկ յեկեղեցին Ս. Էջմիածնի՝ յանուն Սինայի, և էարկ զայն Շղթայ 'ի սիւնս նորա, և ապա գրեաց նոցա՝ թէ կատարեցի զխնդիր ձեր, (1726)։

Եւ 'ի սմին ժամանակի Կարապետ եպիսկոպոս Ուլնեցի ձեռնադրեցաւ Կաթուղիկոս 'ի Կոստանդինուպոլիս (1726) 'ի մեծի Պահոց երկրորդ շաբաթու յաւուր Կիւրակէի, Փետրվար 17. և 'ի 18 ին ձեռնադրեաց եպիսկոպոս զՅովհաննէս վարդապետ Կոլոտ՝ Պատրիարքն Կոստանդինուպոլսոյ, յետ վարելոյ նորա զամն տասն զիշխանութիւն իւր։ Կարապետ Կաթուղիկոս գրեաց գիր յԵրուսաղէմ առ Գրիգոր Շղթայակիր վասն խնդրոյ իմիք. և նորա կատարեալ զխնդիրն՝ գրեաց փոխադարձ գիր և առաքեաց ընդ Աթոռականին իւրոյ Հաննա վարդապետի, եւ իբր նուէր՝ մի ոսկի Խաչ, յոր ամփոփեալ էր մասն ինչ 'ի Կենաց Փայտէն, զոր սիրով ընկալեալ Կարապետի՝ էարկ զայն զանջով իւրով։ Ապա ձեռնադրեաց անդ 'ի Կոստանդինուպոլիս եպիսկոպոս զՀաննա աթոռական վարդապետն եւ զԹովմայ վարդապետն աշակերտ Յովհաննու Կոլոտի։ Կաթուղիկոսն բնակէր 'ի վանս Իսկիւտարու, որ յայնժամ հոգեւոր կոչէին։ Սորա առաջին հիմնադիրն է Մարտիրոս վարդապետ Դրիմեցի. զկնի մահուան նորին՝ աւերեալ և քայքայեալ էր, զոր Գրիգոր և Յովհաննէս վերըստին նորոգեցին։ Եւ յաւարտիլ չինութեան եկեղեցւոյն Միջագիւղի, յաւուր հանդիսի օծման նորին, հրաւիրեաց անդ զՏէր Կարապետ Կաթուղիկոսն, և ետ ծանուցանել նմա յատենի եկեղեցւոյ զերիս գլուխս բանից իբր կանոն վասն բարեկարգութեան Աթոռոյն Երուսաղէմի, որք են.